

սիրտին մեջ *Վահագնը* եւ *Արմենուհին*: Պատմութիւնը չի՛ բաւեր՝ հին օրերու, նախաքրիստոնէական մեծ դէպքերու վերահասու ըլլալու համար հոգեվին: Պատմութիւնները անունները կ'որոշեն, մեծ անցքերը, մեծ գիծերը.– բանաստեղծն է որ կը տեսնէ միայն անոնց տակ ապրող, զանոնք *աղթող*, զանոնք ստեղծող յարակայուն հոգին.– կը տեսնէ խառնուածքները կենդանի մկաններով, միշտ թարմ արիւնով եւ իր արուեստին՝ իր *կամքին* համաձայն կ'ընտրէ զանոնք՝ ի խնդիր ընդհանուր սիրելի գաղափարի մը: Ստուգի՛ւ, հեթանոս բանաստեղծութեան պանծալի գլուխ-գործոց մըն է Վարուժանի *Հարճը*, ցանկութեան, նախանձի, կիրքի, վրէժի, հալածանքի, ցաւի ու քաջութեան շանթակուռ խօլաշարժ հրեղէն պատկերներով զեղուն, ուր կը գիտնանք թէ ինչպէս Բագրատունին Տրդատ խնջոյքի մը մէջ կը սիրահարի Սիւնեաց նահապետ Բակուրին հարճերէն ամէնէն սխրալիին, Նազենիկին, թէ ինչպէս Բակուր կը նախանձի Տրդատէն, ինչպէս Տրդատ կը զայրանայ, կը մոլեգնի եւ փրփրերախ նժոյգին վրայ առած Նազենիկը սրարշաւ փախ կու տայ լեռնէ լեռ, ձորէ ձոր, հակառակ զինքը հալածող թշնամի անհամար նետերուն, թէ ինչպէս Բակուրի վերջին մէկ նետը հուսկ ուրեմն կը հասնի քառատրոփ նժոյգին ու կ'սպաննէ Նազենիկը: Մէ'կ խօսքով ապողոնեան ուժին փառաբանութիւնը, սայրասուր կամքին եւ գեղեցկին պաշտամունքը, գեղեցկին, իբրեւ ամէնէն խորունկ արձագանգին՝ կեանքին անիշխանական անբաւութեան մէջ, գեղեցկին՝ որ ուրիշ բան չէ հեթանոս երգիչին համար, բայց եթէ կեանքին այդ ամբաւ պատկերին պատճառն ի՛սկ, ստեղծիչն ի՛նկ:

*Հարճը* հեթանոս ներքնասարահի մը ճշգրիտ ցայտուն մէկ նկարն է ուր Վարուժանի փայլակնարագ տեսանող երեւակայութիւնը կը ճախրէ առարկայէ առարկայ, այնքա՛ն հեշտին, իբրեւ միահեծան տէրն իսկ այդ առարկաներուն: Հեթանոս դարերու տեսիլքներուն մասին իր ունեցած ջերմ նախապատուութիւնն է անշուշտ որ իրեն սապէ՛ս